ԱՐԳԻՇՏԻԽԻՆԻԼԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Արգիշտիխինիլի քաղաքի տասնամյա սիստեմատիկ պեղումները, որ կատարում են ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երկու[1] արշավախմբերը՝ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի մասնակցությամբ, հարուստ և արժեքավոր նյութեր տվեցին ուրարտական քաղաքաշինության, ամրաշինության, պալատական և բնակարանային ճարտարապետության վերաբերյալ։

Քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում, ներկայիս Նոր-Արմավիր, Նոր-Ամասիա, Նալբանդյան, Փոքր-Շահրիար, Հայկավան և Ջրաշատ գյուղերի միջև ընկած բարձունքների վրա և զբաղեցնում է մի քանի հարյուր հեկտար տարածություն։ Նրա արևելյան մասում 80 մ բարձրությամբ վեր է խոյանում Արմավիրի բլուրը, որի վրա կառուցված է քաղաքի արևելյան միջնաբերդը։ Նրանից 1 կմ հեռավորության վրա, դեպի արևմուտք 2,5 կմ երկարությամբ ձգվում է, այսպես կոչված, ս. Դավթի բլրաշարքը, որի գագաթը, լանջերը և ստորոտը կառուցապատված են բնակելի թաղամասերով։ Բլրաշարքի արևմտյան մասում, նրա ամենաբարձր ելուստի վրա տեղադրված է քաղաքի սրևմտյան միջնաբերդը[2]։ Սրա զբաղեցրած տեղամասը բլրաշարքի իրեն հարակից մասերից բարձր է՝ արևելյան կողմում 15 մ, արևմուտքում՝ 7 մ։ Ընդհանուր բարձրությունը հարավում մոտ 40 մետր է, իսկ հյուսիսում՝ 25 մ։ Բլրի երբեմնի անհարթ և ժայռոտ մակերեսը հարթեցվել է կառուցումներ կատարելու և միաժամանակ շինանյութ հայթայթելու նպատակով և այժմյան վիճակով նրա գագաթի մակարդակի նիշերի տարբերությունը քիչ տեղերում է անցնում 2 մետրից։

Արևմտյան միջնաբերդի պարիսպները մեկ, երկու, իսկ հյուսիս-արևմտյան կողմում՝ երեք շարքով օղակում են բլրի գագաթն ու լանջերը, ստեղծելով արհեստական, հարթ տերրասներ, որոնք օգտագործվել են կառույցների համար։ Պարիսպներն այս դեպքում պաշտպանական նշանակությունից բացի ունեցել են նաև հենապատի նշանակություն։ Դրանք մեծ մասամբ կառուցված են բլրի ռելիեֆի գծագրությանը համապատասխան, որով և պայմանավորված է ամրոցի հատակագծային ընդհանուր հորինվածքը։ Պարիսպների տարբեր շարքերի հնագիտական-շերտագրական ուսումնասիրությունը, ինչպես և ճարտարապետական ֆունկցիոնալ վերլուծությունը, որին ստորև կանդրադառնանք, ցույց են տալիս, որ դրանք կառուցվել են քաղաքի երկա-

---

[1] *Քաղաքի արևմտյան հատվածի պեղումները կատարվում են պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանի գլխավորությամբ, իսկ արևելյան միջնաբերդի պեղումները, որ 1962—1969 թթ. ղեկավարել է պրոֆ. Բ. Ն. Առաքելյանը, այժմ շարունակվում են պատմական գիտությունների թեկնածու Գ. Ա. Տիրացյանի ղեկավարությամբ։*

[2] *Արգիշտիխինիլի քաղաքաշինական սխեմայի վերաբերյալ տե՛ս* А. А. Мартиросян, Раскопки Аргиштихинили, «Советская археология», 1967, № 4, стр. 220—236.

բատև կյանքի տարբեր ժամանակներում՝ հիմնականում նպատակ ունենալով, քաղաքի աճին զուգընթաց, ընդարձակել միջնաբերդի գրաված տարածությունը։

Նկ. 1. Արևմտյան միջնաբերդի ընդհանուր հատակագիծը

Շինարարական առաջին շրջանում, այսինքն քաղաքի հիմնադրման ժամանակ պարսպապատվել է միայն բլրի հարթ գագաթը, նրա եզրի պարագծով՝ ամփոփելով իր մեջ մեկ հեկտարից մի փոքր ավելի տարածություն։ 3,5 մետր հաստությամբ պարիսպները, ինչպես ամենուրեք ուրարտական ճարտարապետության մեջ, ուղղագիծ են՝ հատակագծում մոտավորապես ուղիղ անկյուն կազմող շրջադարձումներով։ Արտաքինից, իրենց ամբողջ պարագծով, նրանք ունեն ռիթմիկ հաջորդականությամբ կառուցված ուղղանկյուն աշտարակաձև ելուստներ (կոնտրֆորսներ)՝ միմյանցից միջին հաշվով 7—8 մ հեռավորությամբ, 4—5 մ լայնությամբ և 1 մ խորությամբ։ Պարսպի գետնախարսխային մասը (որոշ տեղերում մինչև 4 մ բարձրությամբ) շինված է կոպիտ տաշված բազալտ քարերից՝ ամրացված կավե շաղախով։ Գետնախարսխի վրա,



Նկ. 2. Հյուսիս-արևմտյան պարիսպների չափագրությունը

պարսպի ամբողջ բարձրությամբ եղել է հում աղյուսի կանոնավոր շարք։ Պարսպի առաջին շարքը բավականաչափ լավ է պահպանվել բոլոր կողմերում, բացառությամբ հարավ-արևմտյան անկյան, որտեղ նրա հատակագիծը հնարավոր է վերականգնել միայն մոտավոր ճշտությամբ։ Միջնաբերդի կենտրոնական մասում գտնվող ընդարձակ բակի արևելյան և արևմտյան կողմերում, նրա ամբողջ լայնությամբ, կառուցված են պալատական մեծ շինություններ, որոնք իրենց ուղղագիծ և փոխուղղահայաց կանոնավոր հատակագծային ցանցով ներգծված են պարիսպների մեջ։ Արևմտյան պարսպի ներսի կողմում, նրան կից հետագայում կառուցվել է մի առանձին շինություն, և այդ հատվածում պարսպի և պատի հաստությունը կազմում է 5,5 մ։

Միջնաբերդի պարսպի առաջին շարքի ընդհանուր երկարությունը, նրա հյուսիս-արևմտյան անկյան հավանական վերակազմությամբ, մոտ 600 մ է։ Նրա հյուսիսային հատվածի կենտրոնական մասում պեղումներով լրիվ բացվել է միջնաբերդի գլխավոր մուտքը, որն ունի 3,5 մ լայնությամբ երկու գաբպաս։ Դրանք միմյանց հանդեպ տեղադրված են ուղիղ անկյան տակ, իսկ նրանց միջև գտնվում է հատակագծում սեղանաձև միջանկյալ, շլյուզային տարածություն։ Արտաքին դարպասը կառուցված է հյուսիսային պարսպին ուղղահայաց՝ նրա անկյունաձև ներս ընկած մասում։ Պարսպի այս անկյունավորումը չի թելադրված, իհարկե, ռելիեֆով, այլ արված է ամրոցի մուտքին մոտեցող թշնամուն երկկողմանի, խաչաձև հարվածի տակ առնելու հնարավորություն ստեղծելու համար։ Բացի այդ, հատակագծի այսպիսի կառուցվածքի շնորհիվ մուտքը տեղադրվում է ամրոց տանող ճանապարհի նկատմամբ հարմար՝ ճակատային ուղղությամբ։ Ճանապարհը ևս, անցնելով բլրի լանջի թեքությամբ, հսկողության տակ կարող էր առնվել հյուսիսային պարսպի արևելյան հատվածի կողմից։ Պեղումներով բացված ճանապարհի վերին մասն ունի 10 մ լայնություն, որ միանգամայն բավարար է երկու հանդիպող մարտակառքերի կամ սայլերի միաժամանակ անցնելու համար։ Մուտքի մոտ, ճանապարհի հյուսիսային եզրի երկարությամբ բացվել է 2 մ բարձրությամբ, կոպիտ տաշված բազալտի մեծ քարերով շարված հենապատ, որը մեզ հիշեցնում է ասսուրական բարձրաքանդակներում պատկերված պանդուսները[3]։ Այդպիսիք պահպանվել են նաև Արագածի[4] և Տաշբուրունի[5] միջնաբերդում։

Արտաքին և ներքին դարպասների միջև ընկած շլյուզային տարածությունը, որն ունի 71 մ² մակերես, մեծ դեր է ունեցել ամրոցի պաշտպանության ժամանակ։ Առաջին դարպասի գրավումից հետո թշնամու բանակի սահմանափակ քանակությամբ զինվորները, որ կարող էին տեղավորվել շլյուզում, կհայտնվեին երկրորդ փակ դարպասի առջև՝ չորս կողմից կընկնեին պաշտպանվողների հարվածների տակ։ Շլյուզով բաժանված կրկնակի, երբեմն նույնիսկ եռակի դարպասներ ունեցող մուտքերն առկա են Առաջավոր Ասիայի ամրաշինության մեջ։ Ուրարտուում այդպիսի մուտք մեզ հայտնի էր

---

[3] Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, табл. VI.

[4] К. Л. Оганесян, Урартское поселение в селе Арагац, «Տեղեկագիր», (հաս. գիտ.), Հայկական ՍՍՀ ԳԱ, 1958, № 4, էջ 86։

[5] М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, МАК, вып. V, М., 1896, стр. 13; А. А. Ивановский, По Закавказью, МАК, вып. VI, М., 1911, стр. 56.



Նկ. 3. Միշնարերդի գլխավոր մուտքը (հատակագիծ և կտրվածքներ)

էրեբունիի միջնաբերդից, որտեղ, ի տարբերություն Արգիշտիխինիլիի, երկու դարպասներն էլ տեղադրված են միևնույն առանցքով[6]։

Միջնաբերդի արևելյան մասը գրավող պալատական շինությունը բացի դեպի կենտրոնական բակը բացվող դռնից (որը գտնվում է բակի հարավ-արևելյան անկյունում) ունի նաև մի երկրորդը, արևելյան պարսպի հատակագծում աստիճանաձև մասի կենտրոնական հատվածում, որով անմիջապես հաղորդվում է արտաքին քաղաքի հետ։ Միջնաբերդի այս մուտքն ունի 2,5 մ լայնություն և տեղադրված է բլրաշարքի երկարությամբ ձգվող կենտրոնական փողոցի ճիշտ առանցքով, բայց նրանից բարձր է 2,2 մ։ Դռան համեմատաբար նեղ բացվածքը, և այն հանգամանքը, որ այս մուտքը բացվում է ուղղակի պալատական սենյակներից մեկի մեջ, ցույց են տալիս, որ այն նախատեսված չի եղել անիվային տրանսպորտի համար։ Մուտքի հյուսիսային կողմում, նրանից 2 մ հեռավորության վրա, պեղումներով բացվել է լանջով դեպի ներքև իջնող 1,5 մ հաստությամբ երկար մի պատ, որը օրգանապես չի միացած գլխավոր պարսպին և կառուցվել է նրանից ուշ՝ հավանաբար շինարարական երկրորդ շրջանում։ Վատ պահպանվածության պատճառով դժվար է կռահել, թե ինչ շենքի է պատկանել այդ պատը, սակայն կասկածից վեր է, որ այն նպաստել է արևելյան մուտքի պաշտպանությանը՝ սահմանափակելով թշնամու գործողությունների դաշտը և ստեղծելով երեք կողմից նրան խաչաձև հարվածի տակ առնելու հնարավորություն։

Պարսպի առաջին շարքի պահպանված մյուս մասում չի հայտնաբերվել ուրիշ մուտքի որևէ հետք։ Հավանաբար, Արգիշտիխինիլիի արևմտյան միջնաբերդը սկզբնական շրջանում Թեյշեբաինի ամրոցի նման ունեցել է երկու մուտք։ Հետաքրքիր է նաև այն փաստը, որ դրանք երկուսն էլ ուղղված են դեպի արևելք՝ արևելյան միջնաբերդի և քաղաքի կենտրոնական թաղամասերի կողմը, որոնց հետ ավելի հաճախ պետք է կապ ունենար ամրոցը։

Շինարարական երկրորդ շրջանում նոր պարիսպներ են կառուցվել բլրի հարավային լանջի վրա և հյուսիսային լանջի արևմտյան մասում, այսինքն այն տեղերում միայն, որտեղ ռելիեֆը հնարավորություն է տալիս զգալի չափով ընդարձակել միջնաբերդի ներքին տարածությունը։ Հարավային պարիսպը արևելյան մասում ձգվում է առաջինից 30 մ հեռավորությամբ, նրան զուգահեռ մինչև բլրի միջին մասը, այնուհետև թեքվում է դեպի վեր և հետո շարունակվում մոտավորապես նույն ուղղությամբ՝ առաջին պարսպից 14 մ հեռավորության վրա։ Այս մասում երկրորդ պարսպից մի փոքր հատված է պահպանվել միայն, սակայն ելնելով տեղի ռելիեֆի գծագրությունից, կարելի է ենթադրել, որ այն ձգվել է հարավային լանջի ամբողջ երկարությամբ և միացել է առաջին պարսպին նրա հարավ-արևմտյան անկյունում։ Պահպանված երկու կիսաշրջան կոնտրֆորսները, ի տարբերություն մյուսների, ավելի մեծ են և ունեն 3 մ ելուստ ու մոտ 6 մ երկարություն, որը, հավանաբար, հետևանք է այն բանի, որ բլրի հարավ-արևելյան լանջը ունենալով համեմատաբար ավելի փոքր թեքություն, կարիք է ունեցել պաշտպանական առավել հզոր պատնեշի։ Առաջին և երկրորդ պարիսպների միջև ընկած տարածությունն այս մասում կառուցապատվել է լայնական հզոր պատերով միմյանցից բաժանված երկարավուն սենյակներով, որոնք ունեցել են տնտեսական

[6] К. Л. Оганесян, Архитектура Эребуни, Ереван, 1961, стр. 20.

նշանակություն։ Այս կառուցվածքի հյուսիսային պատի և առաջին պարսպի միջև թողնվել է 2 մ լայնությամբ և մանր գետաքարերով սալարկված միջանցք։

Հարավային լանջի արևելյան մասում, երկու պարիսպների միջև, միմյանցից աննշան հեռավորության վրա կառուցված են նրանց զուգահեռ ևս երկու պատ։ Սրանք, նույնպես ունեն աշտարակաձև ելուստներ և, հավանաբար, հենապատեր են՝ կառուցված նեղ տերրասների երկարությամբ։

Միջնաբերդի հյուսիսային մասում երկրորդ պարիսպը գծագրվում է ամբողջությամբ։ Նրա արևելյան ծայրին, ամրոցի գլխավոր մուտքին կից, արտաքինից նրան ճիշտ նման կառուցված է մի երկրորդ մուտք, որը տանում է դեպի երկու պարիսպների միջև ընկած տարածությունը։ Գլխավոր ճանապարհից դեպի երկրորդ մուտքն է բերվել մի նոր ճյուղավորում, որի հյուսիսային կողմում բարձրացվել է նույնպիսի հզոր մի հենապատ։ Երկու միմյանց կից և զուգահեռ ճանապարհների մակարդակների տարբերությունը 2,5 մ է։ Երկրորդ մուտքի պահպանվածության վիճակը թույլ չի տալիս ամբողջացնելու նրա հատակագիծը, որ հավանաբար, կարող էր ունենալ առաջինի նման շյուղով միմյանցից բաժանված երկու դարպաս՝ տեղադրված այս անգամ միևնույն առանցքով։ Դեռևս պարզված չէ նաև առաջին և երկրորդ պարիսպների ներքին տարածությունների միջև անմիջական հաղորդակցության հարցը։

Երկրորդ պարսպի կառուցումով, որի ընդհանուր երկարությունը մոտավոր հաշվումներով կարող էր լինել 400 մ, ամրոցի ներքին տարածությունը ավելացել է 6500 մ² և, այսպիսով, շինարարական երկրորդ շրջանում քաղաքի արևմտյան միջնաբերդի գրաված մակերեսը կազմել է մոտ 1,7 հա։

Ավելի հանգամանորեն անդրադառնալով երկու պարիսպների տարբեր ժամանակներում կառուցված լինելու հարցին, կարելի է ասել հետևյալը.

ա) Միացման հանգույցներում երկու պարիսպների շարվածքները օրգանապես միմյանց չեն կապակցված։ Դա պարզորոշ երևում է միջնաբերդի համեմատաբար լավ պահպանված հյուսիս-արևմտյան մասում և երկու մուտքերի միակցման հանգույցում։

բ) Դժվար է ենթադրել, որ միաժամանակ և միմյանց կից կառուցվել են նույնատիպ երկու մուտք, որը գործառական տեսակետից լինելով անիմաստ, անկասկած պետք է թուլացներ միջնաբերդի այդ հատվածի պաշտպանունակությունը։

գ) Հարավային լանջի կենտրոնական մասում, որտեղ երկրորդ պարիսպը իր անկյունային մասով առավել մոտենում է առաջինին, ստացվել է ուրարտական ճարտարապետությանը ոչ բնորոշ և ոչ հստակ հատակագծային լուծում, որը, մեր կարծիքով, չի կարող կառուցված լինել միևնույն մտահղացմամբ, այլ արդյունք է հետագա հավելումների ստիպողական թելադրանքի։

Միջնաբերդի երկրորդ պարսպի կառուցումը գլխավորապես թելադրված է ժամանակի ընթացքում միջնաբերդի տարածությունը նոր կառուցումների համար ընդարձակելու անհրաժեշտությունից։ Ամրոցի պաշտպանությունը ուժեղացնելու դիտավորությունը, եթե նույնիսկ եղել է, ապա՛ չի ունեցել առաջնային նշանակություն, քանի որ.

ա) երկրորդ պարիսպը հավասարապես բոլոր կողմերից չի օղակում միջնաբերդը, այլ կառուցված է, ինչպես ասացինք, միայն այն մասերում, որ-

տեղ բլրի ռելիեֆը առավել նպաստավոր պայմաններ է ընձեռում նոր կառուցումների համար, հաշվի առնելով նաև հիմնական ամրոցի հետ նրանց հնարավոր և հարմար հաղորդակցության հարցը։ Մասնավորապես, երկրորդ պարիսպը չի անցնում պաշտպանական տեսակետից ավելի թույլ արևմտյան և արևելյան կողմերով, որտեղ միջնաբերդը շրջապատի նկատմամբ ունի նվազագույն հարաբերական բարձրություն և, դրանով իսկ, առավել մատչելի է թշնամու համար։

բ) Երկրորդ պարսպի կառուցումից հետո, առաջինը մնալով նրանց միջև ստեղծված խիտ կառուցապատման մեջ, ինչպես դա երևում է միջնաբերդի հարավային կողմում, զրկվում է պաշտպանական ակտիվ դերից՝ այդ զիջելով երկրորդին։

Պեղումների ղեկավար, պրոֆ. Հ. Ա. Մարտիրոսյանը միջնաբերդի երկրորդ պարսպի կառուցումը վերագրում է քաղաքի հիմնադիր Արգիշտի Ա-ի որդի Սարդուրիին[7]։ Նրա բազմաթիվ արձանագրություններում, որ գտնվել են Արմավիրի շրջանում (УКН, 165, 170, 171, 172), Արին-Բերդում (УКН, 164) և մեկը՝ Արգիշտիխինիլիի արևմտյան միջնաբերդի հյուսիս-արևմտյան մասում, երկու պարիսպների միջև ընկած տարածությունից[8], բազմիցս հիշատակվում է այն մասին, որ Սարդուրին ամենուրեք շարունակել է հոր գործը՝ ընդարձակելով հին կառույցները և ստեղծելով նորերը։ Վերջին արձանագրության տեքստի վերլուծության հիման վրա Ն. Վ. Հարությունյանը նշում է, որ այնտեղ հիշատակված պաշտամունքային շենքերը կառուցվել են Սարդուրի Բ-ի թագավորության սկզբում[9]։ Հենց այդ ժամանակին, հավանաբար, պետք է վերագրել նաև երկրորդ պարիսպը, որն իր մեջ է ընդգրկել այդ նոր շենքերը։

Պարսպի երրորդ շարքի մի փոքր հատված է բացվել բլրի հյուսիս-արևմտյան մասում։ Այն ունի ընդամենը 53 մ երկարություն և կառուցված է երկրորդ պարսպից 17 մ հեռավորության վրա՝ երկու ժայռային ելուստների միջև։ Այդ հատվածում պարիսպն ամրացված է միմյանցից մոտավորապես հավասար հեռավորությամբ դասավորված հինգ կոնտրֆորսներով։ Նրանցից կենտրոնականը, որին պաշտպանության ժամանակ, հավանաբար, առավել նշանակություն է տրվել, ունի 1 մետրից ավելի ելուստ և 8 մ երկարություն, այն դեպքում, երբ կողմնայինները ունեն 2—2,5 մ երկարություն և պատի մակերեսից դուրս են գալիս ընդամենը 0,5 մ։

Երրորդ պարսպի պեղված այս փոքր հատվածի հիման վրա հնարավոր չէ անգամ մոտավոր պատկերացում կազմել նրա ընդհանուր հատակագծի մասին, սակայն ելնելով բլրի ռելիեֆի պայմաններից, կարելի է ասել, որ երրորդ պարիսպը, ինչպես և երկրորդը, կառուցված չի եղել բլրի ամբողջ պարագծով։ Դաշտային աշխատանքների արդյունքները բավարար հիմք չեն տալիս որոշելու նաև նրա կառուցման ճիշտ ժամանակը և շարժառիթները, որոնց մասին առայժմ կարելի է խոսել միայն ենթադրաբար։ Թվում է, որ մինչ

---

7 А. А. Мартиросян, указ. соч., стр. 222, 224—226.

8 Н. В. Арутюнян, Новая урартская надпись из Давти-блура, «Вестник древней истории», 1966, № 3, стр. 103.

9 Նույն տեղում, էջ 101։



Նկ. 4. Միջնարերդի հյուսիսային կենտրոնական հատվածի վերակազմությունը

այժմ հայտնի փաստերը չեն հերքում այդ հարցերի վերաբերյալ մեր հետևյալ վարկածը.

Ուրարտական ամրաշինության մեջ, ինչպես ցույց է տալիս նաև այս միջնաբերդի առաջին և երկրորդ պարիսպների քննությունը, նոր ամրոցի կամ նոր պարսպի կառուցումը պայմանավորված է և ուղեկցվում է նրանով պարփակված տարածության կառուցապատմամբ, որի աշխատանքները կարող են տարվել պարսպի շինությանը զուգահեռ կամ, առավել ապահովության համար՝ նրա ավարտից հետո։ Այլապես, միջնաբերդի ունեցած սուղ և սահմանափակ ներքին տարածության պայմաններում առնվազն նպատակահարմար չէր լինի չօգտագործել մեծ աշխատանքների գնով ձեռք բերված պարսպապատ տարածությունը։

Սակայն երկրորդ և երրորդ պարիսպների միջև պեղումներով դեռևս չի բացված որևէ մոնումենտալ շենքերի հետքեր։ Այս մասում բլրի լանջով դեպի ներքև խիտ և տերրասաձև դասավորությամբ կառուցվել են բադմաթիվ փոքր և աղքատ խրճիթներ, որոնք Հ. Ա. Մարտիրոսյանի թվագրությամբ պատկանում են քաղաքի պատմության վերջին՝ անկման շրջանին, երբ քաղաքական ու ռազմական պայմանների բերումով ամրոցի զինվորական և վարչական անձնակազմը ստիպված է եղել հեռանալ քաղաքից։ Ըստ երևույթին, երրորդ պարսպի կառուցումը սկսվել է մի փոքր ավելի վաղ, այս, հավանաբար, անսպասելի իրադարձություններից, որոնք և խանգարել են շինարարների մտահղացման լիակատար իրականացմանը, իսկ քաղաքի բնակչությունը արտաքին հարձակումներից պաշտպանվելու համար ապաստան է գտել պարսպի ներքին դեռևս չկառուցապատված տարածության վրա հապճեպ շինված խրճիթներում։

Պեղումների նյութերով հնարավոր է ընդհանուր գծերով, առանց որոշակի մանրամասների, կատարել քաղաքի արևմտյան միջնաբերդի ամրաշինական կառույցների տարածական վերակազմությունը՝ օգտվելով նաև ուրարտական այլ ամրոցների, մասնավորապես, Էրեբունի ու Թեյշեբաինիի և ուրարտական ամրոցների վերաբերյալ ասսուրական արձանագրությունների և բարձրաքանդակ նյութերից։

Պարիսպներ ամբողջությամբ չեն պահպանվել և ոչ մի ուրարտական հուշարձանում։ Գլխավորապես ավերվել են նրանց վերին աղյուսաշեն մասերը։ Բացառություն է Վանի ամրոցի պարիսպը, որը ամբողջությամբ կառուցված է մեծածավալ բազալտ քարերի շարվածքով[10]։ Թեյշեբաինիում պահպանված պարսպի առավելագույն բարձրությունը հասնում է 7 մ[11]։ Արգիշտիխինիլիի արևմտյան ամրոցում պարիսպը միայն մի փոքր հատվածում է պահպանել 4 մետրից մի փոքր ավելի բարձրությամբ։ Այստեղ քարաշեն դետնախարսխի վրա մնացել է 16 շարք հում աղյուս։

Ուրարտական ամրոցների պարիսպների սկզբնական բարձրության վերաբերյալ ուղղակի փաստերի բացակայության պայմաններում միակ աղբյուրը ուրարտական և ասսուրական բարձրաքանդակ պատկերներն են։ Քեֆկալեսիում գտնված բարձրաքանդակի համաչափական և մասշտաբային վերլուծության հիման վրա Բարնեյը և Լաուսոնը հանգում են այն եզրակացության, որ այնտեղ պատկերված պարսպի իրական բարձրությունը կարող էր լինել 12

[10] Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, стр. 199.

[11] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, стр. 161.

և ավելի մետր[12]։ Այս բարձրությունը կարելի է ընդունել նաև մեր վերակազմության հիմքում, մանավանդ, որ դա հաստատվում է Թոփրակ-Կալեում գտնված բրոնզե մոդելի օրինակով[13] և բալավաթյան դարպասների ուրարտական ամրոցների պաշարումն ու գրավումը պատկերող բարձրաքանդակներով, որտեղ դիտվում է մոտավորապես նույն հարաբերությունը պարսպի ուղղահայաց և հորիզոնական չափերի միջև[14]։

Պարսպի կայունությունը մեծացնելու նպատակով՝ նրա հաստությունը, որ հիմքի մոտ 3,5 մ է, դեպի վերև աստիճանաբար նեղացվել է։ Այս երևույթը, որ նկատելի է արևմտյան ամրոցի համեմատաբար լավ պահպանված մասերում, արտահայտված է նաև Քեֆկալեսիի բարձրաքանդակում և Թոփրակ-կալեից գտնված մոդելի վրա։ Երկու քանդակներում էլ պարիսպներն ավարտվում են ատամնավոր վերջավորությամբ, որն ընդհանրապես, կառուցվել է պարսպի վերին մասի արտաքին եզրի երկայնքով, ունեցել է փոքր լայնություն և ծառայել որպես պաշտպանիչ պարապետ՝ պարսպի վրայից կռվող զինվորների համար։ Ուրարտական ամրոցների ատամնավոր վերջավորության մասին հիշատակվում է Սարգոն Բ-ի Աշուր աստծուն ուղղված նամակում, որտեղ նկարագրվում է նրա մ. թ. ա. 714 թ. ռազմարշավը դեպի Ուրարտու[15]։ Դատելով հիշյալ քանդակներում պատկերված ատամնավոր վերջավորության ձևերից, կարելի է ասել, որ դրանք շարված են աղյուսով, չնայած այն հանգամանքին, որ Տուշպայի[16] և Թեյշեբաինիի[17] միջնաբերդերում պահպանված ատամնավոր քիվերը քարից են։ Մեր վերակազմության մեջ դրանք պատկերված են աղյուսաշեն, քանի որ պեղումներով չի հայտնաբերվել քարե ատամնավոր քիվի որևէ բեկոր։

Միջնաբերդի մուտքերի բացվածքները, անկասկած, պսակված են եղել, կամարներով, ինչպիսիք պատկերված են ուրարտական և ասսուրական բարձրաքանդակներում։ Կամարի կառուցվածքը տարածված է եղել ուրարտական ճարտարապետության մեջ։ Այդ ձևը կիրառություն է գտել նույնիսկ Մանազկերտի և Վանի ժայռակոփ կառուցվածքներում[18]։ Մուտքի երկու դարպասների միջև ընկած շլյուզը, ամենայն հավանականությամբ, ծածկ չի ունեցել, այլապես, զրկված լինելով վերևից պաշտպանվելու հնարավորությունից, չէր ծառայի իր նպատակին։

Հիմնականում ահա այս ելակետերն են ընկած մեր մասնակի վերակազմության հիմքում։

---

[12] C. A. Burney and G. R. J. Lawson, Urartian reliefs at Adilcevaz on lake Van and a rock relief from the Karasu, near Birecik, Anatolian Studies, vol. 8, 1958, էջ 217, աղ. XXXIV

[13] R. D. Barnett, The excavations of the British Museum at Toprak-kale near Van, Iraq, vol XII, part 1, London, 1950, էջ 5—6, աղ. 1։

[14] R. D. Barnett, Les reliefs de palais assyriens, Praque, 1959, աղ. 168, 169, 171

[15] И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, Вестник древней истории, 1951, № 2, стр. 326.

[16] Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, стр. 199.

[17] К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини, Ереван, 1955, стр. 71, 98.

[18] Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 208։

ФОРТИФИКАЦИОННЫЕ СООРУЖЕНИЯ ЗАПАДНОЙ ЦИТАДЕЛИ ГОРОДА АРГИШТИХИНИЛИ

К. К. КАФАДАРЯН

Резюме

В западной цитадели Аргиштихинили раскопками выявлены три ряда крепостных стен, которые, как показывают археологическая стратиграфия и архитектурно-функциональный анализ, относятся к разным временам жизни города и являются результатом возникшей со временем неоходимости расширить внутреннее пространство цитадели для новых построек.

В северной центральной части цитадели сохранился главный вход в крепость, который отличается своеобразным и остроумным решением фортификационных задач: между двумя—внешними и внутренними воротами, расположенными относительно друг друга под прямым углом, находилось промежуточное, шлюзовое, по всей вероятности, открытое сверху помещение, которое играло важную роль во время обороны крепости.

Во второй строительный период, который датируется началом правления царя Сардури, сына Аргишти, с южной и частично северной сторон цитадели был построен второй ряд крепостных стен. В это же время рядом с главным входом в крепость был сооружен второй вход, ведущий в пространство, образованное между первым и вторым рядами крепостных стен.

Третий ряд крепостных стен пока выявлен на небольшом участке в северной части холма. Он, видимо, сооружен в последний период существования города.

При реконструкции фортификационных сооружений северной центральной части цитадели мы используем как материалы раскопок, так и данные урартских и ассирийских рельефных и письменных памятников.